ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

59-19

« 21» մարտի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 20-ի թիվ 7 որոշումը:

Առդիր 1 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 7

<< 20>> մարտի 2019 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ կետերով, քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Անժելիկա Նազարեթյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրինականացնել Հայաստանի Մանուկներ Հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Վահագնի համայնքի Ալավերդու խճուղի 1-ին փակուղի թիվ 2 հասցեում գտնվող, 06-103-0147-0005 ծածկագրով 0.0691 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 29.835 քմ արտաքին չափերով տաղավարը:

2.Պարտավորեցնել Հայաստանի Մանուկներ Հիմնադրամին 30-օրյա ժամկետում 29.835 քմ արտաքին չափերով տաղավարի օրինականացման համար համայնքին վճարել 22973 ՀՀ դրամ՝ 1քմ-ի համար 700 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում:

4. Պետական գրանցման համար հիմք է հանդիսանում սեփականատիրոջ կողմից համայնքին 22973 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

80-19

« 08» ապրիլի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 10 և ապրիլի 5-ի թիվ 11 որոշումները:

Առդիր 2 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 10

<< 04>> ապրիլի 2019 թ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,<< Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածով,<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով,ՀՀ կառավարության 14.03.1997 թվականի թիվ 51 որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 08.04.2004 թ. թիվ 456-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. *Հաստատել ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 456-Ն որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Վահագնի համայնքին փոխանցված համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0,34094 հա արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության,գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:*
2. *Ճանաչել Վահագնի համայնքի սեփականության իրավունքը 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0,34094 հա արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող,ՀՀ կառավարության 14.03.1997 թ. թիվ 51 որոշմամբ համայնքին փոխանցված (որպես կովանոց)1707,1 քմ ներքին մակերեսով (արտաքին մակերեսով՝ 1788,415 քմ) անասնաշենքի և 26,59 քմ պարիսպի նկատմամբ:*
3. *06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0,34094 հա հողամասին և նույն հողամասում գտնվող անասնաշենքին գրամադրել Վահագնի համայնք 6-րդ փողոց թիվ 47 փոստային հասցեն:*
4. *Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների և պարտականությունների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական գրամադրելու համար:*
5. *ՈՒԺը կորցրած ճանաչել Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թ. մարտի 13-ի թիվ 5 որոշումը:*

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » ապրիլ 2019 թվականի N 11

Վահագնի համայնքի 06-103-0066-0002 ծածկագրի տնամերձ հողամասին և տանը փոստային հասցե տրամադրելու մասին.

Ղեկավարվելով «ՏԻՄ» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշման 48-րդ կետով և հիմք ընդունելով Վահագ Կիրակոսյանի դիմումը.

Որոշում եմ

1. 06-103-0066-0002 ծածկագրի տնամերձ հողամասին և տանը տրամադրել փոստային հասցե գ. Վահագնի 3-րդ փողոց 1-ին փակուղի 3 հասցե:

2. Որոշումը ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի Վանաձորի ստորաբաժանումում:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20

« 14 » հունիսի 2019թ. Վահագնի համայնք

Լոռու մարզի Վահագնի համայնքում շտաբային
ուսումնավարժության անցկացման մասին

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի ս/թ հուլիսի 10-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Վահագնի համայնքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով:

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ավագանու անդամ Պետրոս Մայյանին :

Շտաբը կազմավորել համայնքի ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային կապի և ազդարարման, տրանսպորտային, ինժեներական, բույսերի և կենդանիների պաշտպանության, բժշկական, հասարակական կարգի պահպանման ծառայություններին:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին.

- մշակել և մինչև հունիսի 28-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.
- ուսումնասիրել և ճշգրտել համայնքի «ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.
- համայնքային ծառայությունների ու կազմավորումների պատասխանատուների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.
- նախապատրաստել ղեկավարման կետը.
- իրականացնել բնակչության ուսուցում՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում վարվելակերպի կանոնների մասին.
- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև հուլիսի 8-ը:

4. Համայնքային ծառայությունների պատասխանատուներին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների կանոնադրություններն ու խնդիրները:

2) կապի և ազդարարման պատասխանատու Սիրուշ Ղույյանին՝ պահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու կազմավորումների հետ:

3) տրանսպորտային ծառայության պատասխանատու Սերյոժա Քոչինյանին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ անկված խոզերին տեղափոխելու նպատակով.

4) ինժեներական ծառայության պատասխանատու Վահե Մայյանին՝ պատրաստ վիճակի բերել առկա ինժեներական միջոցները, անկված խոզերին թաղելու նպատակով.

5) բժշկական ծառայության պատասխանատու Նազենի Կիրակոսյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.

6) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պատասխանատու Միհեր Փարեմուզյանին՝ ճշգրտել ծառայության խնդիրները՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.

7) հասարակական կարգի պահպանման ծառայության պատասխանատու ոստիկանության մայոր Ավետիք Ղազարյան՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:

5. Ուսումնավարժության ղեկավարումն իրականացվելու է համայնքի կառավարման կետից:

6. Ուսումնավարժության անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ